



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 սեպտեմբերի 2024 թվականի N170-Ա

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ ԳՅՈՒՂԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 7-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ
10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՌԱՖԻԿ ԴԻԼԱՆԶՅԱՆԻՆ ԵՎ ՆՎԱՐԴ
ԲՈՒԴԱՂՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
(ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի կանոններով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածով, 89-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ներքին խնձորեսկ գյուղի բնակիչներ Ռաֆիկ Դիլանյանի, Նվարդ Բուդաղյանի և Գորիս համայնքի միջև կնքված համաձայնագիրը և հաշվի առնելով, որ քաղաքացիներ Ռաֆիկ Դիլանյանը և Նվարդ Բուդաղյանը իրենց սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ներքին խնձորեսկ գյուղի 2-րդ փողոց թիվ 34 հասցեի 0,12հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը նվիրաբերել են «Հայաստան» համահայկական հիմնադրամին բնակելի տուն կառուցելու համար ու համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Գորիս համայնքի Ներքին խնձորեսկ գյուղի 2-րդ փողոց 7-րդ նրբանցք թիվ 10 հասցեում գտնվող 0,12հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-063-0003-0030) անհատույց սեփականության իրավունքով (նվիրել) օտարել Ռաֆիկ Դիլանյանին և Նվարդ Բուդաղյանին:
- Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ
ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՏՈՌՈՉՅԱՆ ԱՐՏԱԿ
ՏՈՌՈՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ